

ՐԱՖՖՈՒ «ԿԱՅԾԵՐԸ» ԵՎ ՇԻԼԼԵՐԻ «ԱՎԱԶԱԿՆԵՐԸ»

Գաղափարական առնչություններ

Ա. Ս. ԲԱԳՈՅԱՆ

ԳԴԴ դասախոս

19-րդ դարի 50-70-ական թվականներին հայ հասարակական միտքն զբաղված էր Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդրով: Այս հարցով առանձնակի հետևողականությամբ էր զբաղվում Րաֆֆին՝ մեկը մյուսի հետևից լույս ընծայելով ազատասիրական գաղափարներով ներծծված իր ծրագրային-քաղաքական վեպերը: Թե՛ իր ժամանակներում, թե՛ հետագայում դրանք մեծ արձագանք գտան՝ հայ ժողովրդին մղելով ազգային ինքնագիտակցության վերելքի ու պայքարի: Պատահական չէ, որ տարիներ անց, Ա.Զոպանյանին գրած նամակներում, Տ.Կամսարականն անդրադառնում է Րաֆֆուն, որի առաքելությունն էր վեպերի միջոցով ազատաշունչ գաղափարները փոխանցել հայ մարդուն: Բարձր գնահատելով հանճարեղ վիպասանի գործը՝ Տ.Կամսարականը գրում է. «...Րաֆֆին ազգային գիտակցությունը արթնցուց, մեր քնացող հայրենասիրությունը արծարծեց, հրահրեց: Րաֆֆին ըմբոստացումի «Կայծեր»-ը ցատկեցուց հոս հոն հայ հոգիներում մեջ, որք բռնկեցան. ասով վեհ հայրենասերի ու հանճարեղ վիպասանի գործ տեսավ ինքը...» (Արշակ Զոպանյանին, 1899, հունվար 21, Ալեքսանդրիա)¹: Նույն նամակում հեղինակը հայտնում է նաև այն հանդգնումը, որ «քաղաքական ծրագիրները վեպերեն չեն քաղվիր, ներշնչումները, մայր-գաղափարները այո՛...»²: Ստանալով Զոպանյանի համարժեք արձագանքը՝ պատասխան նամակում (Ա.Զոպանյանին, 1899, մարտ 8, Ալեքսանդրիա) Տ.Կամսարականը գրում է. «Րաֆֆին էր, որ կրակը դպցուց հայ հայրենասիրության պատրույզին»³, բայց նա ցավով նշում է, որ հայ մտավորականությունն ի գործու չեղավ իրագործելու մեծ վիպասանի գաղափարները:

Համաշխարհային պատմության մեջ եզակի չեն նմանատիպ դեպքերը, երբ գրողն իր ընթերցողի առջև է դնում առաջադեմ գաղափարների խտացում հանդիսացող երկեր՝ տալով դրությունը շտկելու, բարելավելու հնարավոր տարբերակներն ու ուղիները: Սակայն միշտ չէ, որ հնարավոր է լինում իրա-

¹ «Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1972, էջ 57:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

գործել դրանք: Այսպես, երբ գերմանացի հանճարեղ գրող Ֆ. Շիլլերը կերտում էր գաղափարական ավազակ Կարլ Մոորի կերպարը՝ իր առջև ունենալով իր հայրենակցի՝ Շուբարտի «Մարդկային սրտի պատմությունից» պատմվածքը, նա հանդես էր գալիս իբրև «Գրոհ և փոթորիկ» գրական շարժման հակաֆեոդալական և հումանիստական գաղափարների ջերմեռանդ երկրպագու: Նա խանդավառված էր համաշխարհային մեծագույն գրողների ու փիլիսոփաների ստեղծագործություններով և հավատացած էր, որ մարդը կարող է այնքան ուժեղ գտնվել, որ միայնակ դուրս գա ամբողջ հասարակության դեմ, պայքարի և խորտակի բռնությունն ու անարդարությունը՝ հաստատելով արդարություն և հավասարություն: Սակայն Կարլ Մոորի, ըստ էության՝ նաև հեղինակի՝ Շիլլերի երազանքը՝ հասարակության ախտերը երկաթով կամ կրակով բժշկելու մասին, մնում է անիրագործելի, քանզի նա միայնակ է, և իր կողքին չկան այն կտրիճները, որոնց հետ միասին նա կհասնի բաղձալի նպատակին: Այսուհանդերձ, Կարլ Մոորի խնդիրները սահմանափակվում են ներընտանեկան և հասարակական շրջանակներով:

Այլ է խնդիրը Րաֆֆու երկերում, որոնցից մի քանիսը («Ջալալեդդին», «Խաչագողի հիշատակարանը», «Կայծեր») այս կամ այն չափով կրում են Շիլլերի «Ավազակներ» դրամայում արծարծվող գաղափարների ազդեցությունը: Թեև հայ մեծ վիպասանը ևս քննադատության սլաքներն ուղղում է ընդդեմ ֆեոդալական հետամնացության, տգիտության, անարդարության, ինչու՞ չէ, նաև ներընտանեկան խնդիրների, սակայն հայ մարդու թե՛ ընտանեկան, թե՛ հասարակական խնդիրներին ավելանում է նաև ազգայինը: Րաֆֆու «Կայծեր» վեպը ազատագրական պայքարի, լուսավորության, ազգային գիտակցության վերելքի մղող ընդգրկում մի ստեղծագործություն է, որն ինչպես 19-րդ դարավերջին, այնպես էլ հարյուր տարի անց զգալի դերակատարում ունեցավ հայ մարդու ազգային ոգու զարթոնքի և ազատագրական պայքարի գաղափարի շուրջ համախմբման գործում:

Ինչպես Շիլլերը, այնպես էլ Րաֆֆին համարվում են միտումնավոր հեղինակներ: «Րաֆֆին իր գրական գործունեության բոլոր շրջաններում, - գրում է Մ. Նահապետյանը «Րաֆֆու «Կայծեր» վեպը» հոդվածում, - հանդես է եկել իբրև խիստ միտումնավոր գրող, այդ բառի դրական ու լայն իմաստով: ...Նրա երկերին հատուկ են գաղափարական նպատակասլացությունը և ուժեղ տեմդենցիան»⁴: Նա ուներ կարևոր նպատակ, որին հետամուտ է լինում մի շարք վեպերում. «Ֆեոդալիզմի տիրապետության պայմաններում ապրող, դաժան

⁴ Րաֆֆի, Եժ տասը հատորով, հտ. 5, Երևան, 1956, էջ 509:

ճնշման ու հարստահարման հետևանքով հեռանկարը կորցրած, երկչոտ ու ստրկամիտ դարձած հայ մարդուն անհրաժեշտ էր վերադարձնել ազգային հպարտությունն ու կորցրած արժանապատվությունը և հավատ ներշնչել իր ուժերի հանդեպ»⁵։ Թերևս հենց այս հանգամանքը նկատի ունեն Ռ.Պատկանյանը, որը բարձր գնահատելով Րաֆֆու ոգեշնչող երկերը՝ 1874 թ. սեպտեմբերի 5-ին նրան ուղղված նամակում գրում է. «Դուք անզգալապես կգարթեցնեք ազգի մեջ այն թմրած զգացմունքը, որ Ձեր նախորդները իզուր աշխատում էին զարթեցնել թմբուկներով, փողերով, և հազար ու մեկ լաց ու շիվաններով...»⁶։

Ուշագրավ փաստ է, որ մինչև 1878 թ. վերջը Րաֆֆու ստեղծագործությունների ցանկում չկա որևէ հիշատակում «Կայծեր» վեպի մասին։ Սակայն ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այս վեպի գրության ժամանակը համապատասխանում է 1874 թ-ի վերջերին, երբ «Փունջի» երրորդ հատորի համար գրողը նախապատրաստում է «Խաչագողի հիշատակարանը» վերնագրով մի ձեռագիր՝ գրված 1872-1873 թթ., որը, ցավոք, չի պահպանվել, և որի մշակման և ընդարձակման արդյունքում ստացվում է երկհատոր ստվարածավալ մի վեպ։ Այս մասին կարդում ենք Հովհաննես Տեր-Պրիգորյանի Րաֆֆու մասին հուշերում։ ««Խաչագողի հիշատակարանի» ահագին տեսրակը... Րաֆֆիի այն գրվածքը չէր, որ դուք կարդացել եք... Եթե այժմ ձեր ձեռքն անցնի այդ տեսրակը, և դուք նրան համեմատեք տպվածի հետ, դուք կտեսնեք, թե երկուսի միջև որքան զանազանություն կա...»⁷։ Թեև հիշյալ ձեռագիրը չի պահպանվել, սակայն ապացուցված է, որ երբ «Խաչագողի հիշատակարանը» վիպակը մշակման արդյունքում աճել, ընդարձակվել է՝ վերածվելով «մի ահագին տեսրի, «Կայծեր» վեպի թեման միացած է եղել «Խաչագողներին» և երկուսը միասին գրվել, մշակվել և վերամշակվել են «Խաչագողի հիշատակարանը» վերնագրի տակ»⁸։

Ուշագրավ է նաև, որ Րաֆֆին «Կայծերի» վրա սկսում է աշխատել նույն ժամանակահատվածում, երբ գրում էր «Զալալեղիները», և ակնհայտ են այս երկու վեպերի, ինչպես և «Խաչագողի հիշատակարանը» վեպի գաղափարական ուղղվածությունն ու ընդհանուր տրամադրությունը, հակաֆեոդական և հակակղերական շեշտը, որն էլ իր հերթին այս երեք գրվածքները մոտեցնում է հանճարեղ գերմանացու անդրանիկ դրամային։ Հայտնի է, որ Շիլլերի «Ավա-

⁵ Խ.Սամվելյան, Րաֆֆի. Կյանքի ստեղծագործական ուղին, Երևան, 1987, էջ 167։

⁶ Րաֆֆի, Սալբի, Վիեննա, 1911, Աննա Րաֆֆու առաջաբանը, էջ 16։

⁷ Րաֆֆին ժամանակակիցների հուշերում, Երևան, 1989, էջ 192։

⁸ Խ.Սամվելյան, Րաֆֆի. Կյանքի ստեղծագործական ուղին, Երևան, 1987, էջ 210։

զակներ» դրաման մի բողոք է՝ ուղղված ֆեոդալական անառողջ հասարակության, բռնության ու բռնակալների, երեսպաշտ հոգևորականների և ընտանեկան խարդավանքների դեմ: Ըստ էության՝ գրողը փորձում է տալ իր դեղատոմսը՝ հիշելով Հիպոկրատի հայտնի խոսքերը: Այստեղ նկատելի է մի համագամանք. թե՛ Շիլլերը, և թե՛ Րաֆֆին բնաբան են ընտրել այնպիսի տողեր, որոնցում խոսվում է կրակի մասին՝ «Որտեղ անօգուտ են դեղորայքը, այնտեղ օգնում է երկաթը, որտեղ անգոր է երկաթը, օգնում է կրակը»⁹ (Հիպոկրատ), «Առանց փայտի կրակը կհանգչի, և թե որ բանասարկու չլինի, կռիվը կդադարի: Ինչպես ածուխը զորություն է տալիս ԿԱՅԾԵՐԻՆ՝¹⁰ ու փայտը կրակին, այնպես է կռվասեր մարդը վեճ բորբոքելու համար» (Առակ Սողոմոնի ԻՁ գլ. 20-21 համ.), «Բայց այն սերովբեներից մեկը թռավ դեպի ինձ, և ձեռքումը կրակի կայծեր կային, որ սեղանի վրայից ունեւիքով վեր էր առած, և իմ բերանին դիպցնելով, ասաց. ահա այդ քո շրթունքներիդ դիպավ, և քո անօրենություններդ կվերացնե, և քո մեղքերը կսրբե քեզանից» (Եսայի Զ գլ. 6-7 համ.), այսինքն՝ երկու հեղինակներն էլ հավատում են կրակի սրբազորող ուժին. արդյո՞ք սա պատահականություն է: Բացի այդ, հասարակական ախտերի բուժման խնդրին, որը Շիլլերի «Ավազակներ» դրամայի առաջնային նպատակներից մեկն է, Րաֆֆին անդրադառնում է «Պ.Հայկունու կրիտիկան և «Կայծերը»» (30 սեպտ. 1883թ.) ընդարձակ հոդվածում՝ հանդես գալով Փավստոս ստորագրությամբ: Այստեղ հոդվածագիրը «Կայծերը» համարում է «**ժամանակակից**»¹¹ վեպ իր ընդարձակ նշանակությամբ», որտեղ լուսանկարչական ճշգրտությամբ «մի կողմից պատկերացնում է մեզ Տաճկաստանի հայերի **հասարակական հիվանդությունը** իր բոլոր փտեցնող, օրստօրե լուծվող և քայքայվող կողմերով, իսկ մյուս կողմից, ցույց է տալիս այն **դարմանները**»¹², որոնցում պետք է բժշկել հիվանդին»¹³: Ընդ որում, նա չի բացառում, որ այդ «դարմանները գուցե շուտով չեն օգնի, գուցե առաջին անգամ բոլորովին անհաջող կանցնեն, բայց դրանով պետք չէ հուսահատվել, թե դարմանները անօգուտ են», քանի որ դրանք «փորձված» են, իսկ ժողովրդի դարավոր հիվանդությունը «երկարատև բժշկության պետք ունի»¹⁴: Բայց ցավալիմ այն է, որ «բժշկության մասին մտածում են այն ժամանակ, երբ հիվանդն ընկած է»¹⁵:

⁹ **Ֆ.Շիլլեր**, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 33:

¹⁰ Ընդգծումը Րաֆֆունն է:

¹¹ Ընդգծումը Րաֆֆունն է:

¹² Ընդգծումները մերն են՝ Ա. Բ.:

¹³ **Րաֆֆի**, Եժ տասը հատորով, հտ. 10, Երևան, 1959, էջ 125:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, հտ. 4, Երևան, 1956, էջ 407:

Իսկ որո՞նք են Ռաֆֆու առաջարկած «դարձանները»:

Նախ՝ ազգային արժանապատվության գիտակցումը և ռազմաշունչ դաստիարակությունը: Պատահական չէ, որ «Կայծերի» հերոսները երբեմն հիշատակում են անցյալի հոգևոր և աշխարհիկ փառավոր առաջնորդներին՝ նրանց հակադրելով երեսպաշտ ու շահամոլ ժամանակակիցներին. «...Մի ժամանակ մեր նախարարների տներում,- ասում է Ասլանը,- երգում էին Գողթան երգիչները, բայց նրանց ծայրը լռեց այն օրից, երբ հայերի մեջ քաջազնական հոգին հանգավ...»¹⁶: Այս համգամանքը ևս «Կայծերը» մոտեցնում է «Ավագակներին», որի գլխավոր հերոսը կարդում է Պլուտարքոսի «Ջուզահեռ կենսագրությունները» և բացականչում. «Ձգվում եմ այս թուղթ մրոտող դարուց, երբ Պլուտարքոսի մեջ երևելի մարդկանց վարքն եմ կարդում: Պրոմեթևսի բոցավառ կայծը շիջել է... Մի զավակ գոյացնելուց հետո ուժաթափվող թշվառները Յաննիբալի ռազմական տակտիկան են քննադատում...»¹⁷:

Մյուս միջոցն, ըստ Ռաֆֆու, ժողովրդի «կենսական ուժերի» վերականգնումն է ոչ թե եկեղեցական դոգմաներով, այլ հիմնավոր կրթությամբ: Ասլանը, որին շատերն ավագակ էին համարում, «Ժողովրդի կրթված որդին էր, նրա խոսքերը... ազդում էին ավելի մարդու մտքի վրա»¹⁸: Նրա դատողություններն իրավունքի, ազատության, հոգևոր և աշխարհիկ իշխանության ներդաշնակության պայմաններում երջանիկ կյանքի, երիտասարդության, կրթության, սեփական ուժերին վստահելու և նման խնդիրների մասին վերադառնալու կարևոր տեղ են զբաղեցնում: «...Դեռ բոլորովին հանգած չեն կենսական ուժերը,- ասում է Ասլանը:- ...Բայց մնացել են նրանց անզոր կայծերը միայն, որոնց պետք է շունչ տալ, բորբոքել, մինչև նրանք բոցավառվեն...: Իսկ դա լինում է տոկուն և հիմնավոր կրթությամբ, որպեսզի ժողովուրդն ինքը հասկանա, թե որքան լավ է ազատությունը...»¹⁹: Սակայն «մարդկային անհատական ազատության» գիտակցմանը դեմ էր եկեղեցականը, «որ ազգի մեջ էլ լիներ նա»: Ռաֆֆին մեղադրում է հոգևոր դասին, որն անտարբեր է տեր Թոդիկի և նման վարժապետների՝ բռնության ու վախի մթնոլորտում կիրառվող մանկավարժական վաստագուցիչ մեթոդների նկատմամբ, որոնց արդյունքում երեխան մեծանում է ստրուկի հոգեբանությամբ՝ կուրորեն ենթարկվելով լլկողին ու հարստահարողին, արժանապատվությունը թողած՝ հանդուրժելով անարդարությունը, շարունակ համբերելով և վախենալով դիմադրություն ցույց տալ: Ասլանը

¹⁶ Նույն տեղում, հտ. 4, Երևան, 1956, էջ 516:

¹⁷ **Ֆ.Շիլլեր**, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 47:

¹⁸ **Ռաֆֆի**, Եժ տասը հատորով, հտ. 4, Երևան, 1956, էջ 478:

¹⁹ Նույն տեղում, էջ 490:

ցավով է նշում, որ Վանի նահանգում կա 87 վանք ու մենաստան, բայց չկա «ոչ մի ժողովրդական դպրոց»: Մինչդեռ «հայը ընդունակ է կրթության... որովհետև նա ունի հարուստ լեզու և ճոխ, բազմակողմանի գրականություն. նա ունի պատմական անցյալ»: Նման տրամադրություն ենք տեսնում նաև «Ավագակներում», որտեղ Կարլ Մոորը բողոքում է հոգևորականության դեմ, որոնք «հեզություն ու համբերություն են որոտում ամպերի միջից, և մարդկային զոհեր ձոնում սիրո աստծուն...»²⁰: Ավագակապետն ամեն կերպ աշխատում է խրախուսել կրթությունը՝ իբրև լուսավոր ապագայի գրավական, և իր հասանելիք ավարից գումար է հատկացնում «ընդունակ տղաների» ուսման համար: Նա մերժում է եկեղեցու դոգմաները, որոնք իրենց սահմանափակությամբ հակադրվում են ազատությանը. «Պահանջում են, որ մարմինն կապերով պրկեն և կամքս օրենքներով կաշկանդեն: Օրենքը խխունջի նման սողալ է ստիպում այն մարդուն, որ կարող էր թռչել արծվի պես: Օրենքը երբեք մեծ մարդ չստեղծեց, մինչդեռ ազատությունը հսկաներ է առաջ բերում և դյուցազուններ»²¹:

Այսպես են մտածում նաև Րաֆֆու հերոսները: Այո, չի կարող լինել առողջ հասարակություն, եթե նրա անդամներն ազատ չեն, հետևաբար, ոչ պակաս կարևոր է նաև ազատությունը իբրև «դարման» ժողովրդին ստրկական վիճակից ազատելու համար: Իսկ տևական ստրկությունն, ինչպես ցավով նշում է Կարոն, դարձել էր բնավորություն, և ժողովուրդը չէր բողոքում բռնության դեմ: «Ռ՞վ կարող է մարդից խլել նրա ազատությունը,- ասում է որսորդ Ավոն՝ փորձելով բացահայտել ստրկության պատճառները:- ...Մարդն ինքն է պատրաստում իր համար ստրկությունը, և նրա արմատը դրած է ընտանիքի մեջ»²²: Նա բերում է նորածնի օրինակը, որի ձեռքերն ու ոտքերը կապում են և «հոգին թուլացնող, եռանդը մաշող, կամքը և միտքը սպանող» օրորոցայիններով մեծացնում:

«...Ազատությունը մարդու ընդաբույս բնագոյուններից մեկն է,- այս հարցի շուրջ իր կարծիքն է հայտնում Կարոն:- ...Հեռացրու նրանից ճնշող ուժը, կտեսնես, նա ազատ էակ է: Ազատությունը,- շարունակում է նա,- մարդու հասարակական կյանքի մթնոլորտն է, որի մեջ զարգանում է նա, կատարելագործվում է և հասնում է իր մարդկային բարձր նշանակությանը: ...Ազատությունը մարդ սովորում է ազատության մեջ»²³:

²⁰ **Ֆ.Շիլլեր**, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 105:

²¹ Նույն տեղում, էջ 49:

²² **Րաֆֆի**, Եժ տասը հատորով, հտ. 4, Երևան, 1956, էջ 368:

²³ Նույն տեղում, էջ 490-491:

«Ազատությունը գտնվում է ժողովրդական կենցաղավարության երկու ծայրերի մեջ, - ասում է Ասլանը,- մեկում, երբ նա դեռ իր նահապետական պարզության մեջ է ապրում, մյուսում, երբ նա հասել է քաղաքակրթության լույսին: Այս երկու ծայրերի միջոցում տիրում է ստրկությունը»²⁴:

Ազգի ցավերը կարող են բժշկել միայն կրթված, զարգացած, խիզախ ու հայրենասեր երիտասարդները: «Ավագակներում» այս միտքը հնչում է իբրև կոչ՝ «Տուր մի գունդ ինձ նման կտրիճներ,- բացականչում է Կարլը,- Գերմանիան կդառնա մի հանրապետություն, որի առաջ կուսանաց վանքեր կթվան Դոնո ու Սպարտա»²⁵: Սակայն, ըստ էության, նա միայնակ է, և այս խոսքերն ընկալվում են իբրև նախատիմը՝ ուղղված ժամանակակից հասարակությանը: Նման խոսքեր են հնչում նաև «Կայծերում»: Այսպես, խոսելով Կարոյի և նրա ընկերների մասին՝ որսորդ Ավոն հիշում է հայտնի մի ասացվածք՝ «...Մարդ կա, որ հազար մարդու արժե, հազար մարդ կա, որ մի մարդ չարժե», ապա շարունակում է. «Եթե հայոց զավակների գոնյա մի փոքր մասը այնպես լիներ, որպես Կարոն և նրա ընկերները,- ասում է նա,- այդ ազգը շատ բախտավոր կլիներ...»²⁶: Գրեթե նույն կերպ է դատում նաև Ասլանը. «Մեզ պակաս է հասարակական գլխավոր գործությունը... թարմ և նորահաս **երիտասարդությունը**»²⁷. դրանք կարող էին դպրոցների, գրականության և լրագրության միջոցով զարթեցնել և նախապատրաստել ժողովրդին: Բայց դժբախտաբար մենք երիտասարդություն չունենք... Էլ ո՞վ է մնում:- Մնում են մի քանի կարոներ, արդարև, ազնիվ և գործող անձինք, բայց մի ձեռքը ծափ կզարկի»²⁸:

Բացի գաղափարական առնչությունները, ընդհանուր եզրեր ենք նկատում նաև քննվող երկերի կերպարային համակարգում: Այստեղ ևս գործում են ավագակներ՝ բառի դրական և բացասական ըմբռնմամբ, այսինքն՝ այսպես կոչված «գաղափարական ավագակներ» և ավագակներ, որոնք ուղղակի կամ անուղղակի ձևով վտանգ են ներկայացնում բազմաչարչար հայ շինականի համար: Առաջիններն, անշուշտ, մեզ ծանոթ հերոսներն են՝ Կարոն, Սագոն, Ասլանը, որսորդ Ավոն և նրանց համախոհները, երկրորդները՝ հայ և այլազգի բռնակալները, միսիոներները, սահմանափակ մտածողությամբ կղերականները, ստրկամիտ ու երկչոտ դավաճանները...

²⁴ Նույն տեղում, էջ 510:

²⁵ **Ֆ.Շիլլեր**, Ընտիր երկեր, Երևան, 1952, էջ 49:

²⁶ **Րաֆֆի**, Եժ տասը հատորով, հտ. 4, Երևան, 1956, էջ 370:

²⁷ Ընդգծումը Րաֆֆունն է:

²⁸ **Րաֆֆի**, Եժ տասը հատորով, հտ. 4, Երևան, 1956, էջ 491:

Ինչպես Ռաֆֆին, այնպես էլ Շիլլերը, տալով նկարագրվող իրականության ընդգրկում համայնապատկերը, ինչպես նաև ներկայացնելով ավագակների նման տարբերակումը՝ կարծես հարցնում է՝ ո՞վ է իրականում ավագակը՝ Կա՞րլը, որ գլխավորում էր մի ամբողջ ավագակախումբ, թե՞ Ֆրանցը, որը զանազան մեքենայություններ գործի դնելով՝ փորձում էր ավագ եղբորից ամեն գնով խլել հայրական ժառանգությունն ու ծնողական սերը, հոգատար ու հավատարիմ հարսնացուին։ Ավագակ էր Կա՞րլը, որ այդ ճանապարհին ընտրեց՝ ի նշան բողոքի՝ անարդարության դեմ, թե՞ իր խնթակիցներից յուրաքանչյուրը և կամ այդ ժամանակաշրջանում բարեպաշտ ձևացող ազնվականներն ու հոգևորականներից շատերը...

Այն, որ Ռաֆֆին «Կայծեր» գրելիս կրել է Շիլլերի գաղափարների որոշակի ազդեցությունը, կասկածից վեր է, թեև չկան ուղղակի փաստեր, նույնիսկ՝ ակնարկներ։ Սակայն 1883 թ. գրված նրա երկու հոդվածներում էլ՝ «Մամուլի անբարոյականությունը»²⁹ և «Պ. Յայկունու կրիտիկան և «Կայծերը»»³⁰, նա հիշատակում է գերմանացի մեծ լուսավորչի անունը՝ մի դեպքում՝ կապված «Ավագակների» հետ, մյուս դեպքում՝ «Դոն Կարլոսի»։

Այսպիսով՝ Ռաֆֆու «Կայծեր» վեպը, ինչպես նույն այս շրջանում գրված «Խաչագողի հիշատակարանն» ու «Ջալալեդդինը», թե՛ կերպարային, և թե՛ գաղափարական մակարդակներում էապես առնչվում են Ֆ.Շիլլերի «Ավագակներ» ազատաշունչ դրամային՝ փորձելով «դարձանել» հասարակական ախտերը՝ միաժամանակ բացահայտելով ժամանակի հայ իրականության առավել ողբերգականությունը, խավարի մեջ խարխափող և օտարից հալածված հայ գեղջուկի անմխիթար վիճակը։

Չանգուցային բառեր - Ռաֆֆի, Շիլլեր, ազատասիրական գաղափարներ, օրական առնչություններ

²⁹ Նույն տեղում, հտ. 10, Երևան, 1959, էջ 62։ Տե՛ս նաև «Մշակ», 1883, N 25, էջ 1։

³⁰ Նույն տեղում, էջ 90։ Տե՛ս նաև «Մշակ», 1883, N N 141, 142, 144, 145, 148, 149, 150։

"ИСКРЫ" РАФФИ И "РАЗБОЙНИКИ" ШИЛЛЕРА

Идеологические сходства

А. С. БАГОЯН
Преподаватель ГГУ

В статье рассмотрены основные идеи в произведениях "Разбойники" Ф.Шиллера и "Искры" Раффи. Методами сопоставления и сравнения выявляются те особенности, которые аргументируют влияние идей Шиллера на некоторые произведения великого армянского прозаика Раффи, в частности, на роман "Искры". Анализируются общие черты на идеологическом уровне, вопросы морали, относящиеся как к светским представителям разных национальностей, так и к духовенству.

Оба автора для лечения социальных "болезней" предлагают определенные "зелья", коими являются национальное достоинство, воинское воспитание, свобода, равноправие, образование и, конечно, молодое поколение настоящих патриотов и гуманистов

"SPARKS" BY RAFFI AND "THE ROBBERS" BY SCHILLER

Ideological similarities

A. S. BAGOYAN
GSU lecturer

The article represents the basic ideas in the works "Sparks" by Schiller and "The Robbers" by Raffi. The methods of synthesis and comparison are used to identify such features which take into consideration the influence of Schiller's ideas on some works of the great Armenian writer Raffi, in particular, the novel "Sparks". The general features on the ideological level, moral issues related to both secular representatives of different nationalities and the clergy, are analyzed in the article.

Both authors offer certain "potions" for the treatment of social diseases which are the national dignity, military education, freedom, equality, education, and, of course, the younger generation of the true patriots and humanists.